«Քայլ առ քայլ»

բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստում»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Մեթոդիստ՝ Իրինա Պոնոմարենկո

Մանկապարտեզ՝ «Երևանի Հ.6 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ՝ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....5

1.1 Համատեղ ուսուցման էությունն ու առանձնահատկությունները 5

1.2 Համատեղ ուսուցման եղանակները կամ մոդելները.....8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը ՆՈՒՀ-ում պայմանավորված է բազմաթիվ մակարդակներում համագործակցությամբ: Սաներին ներգրավելու, ուսուցումը լավագույնս իրականացնելու, երեխաների կրթական կարիքները հաշվի առնելու հարցում առավել կարևոր է ՆՈՒՀ_ում առկա համագործակցությունը: Բարենպաստ զարգացնող միջավայր ստեղծելու կարևոր նախապայման է ուսումնադաստիարակչական աշխատանքներին մեկ այլ տեսակետից մոտենալը: ՆՈՒՀ-ի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ապահովում է ուսումնառության առավել զարգացնող միջավայր՝ լավագույնս բավարարելով ուսուցման և զարգացման ամենատարբեր կարիքներ ունեցող սաներին անհրաժեշտ պայմանները:

Խմբերում, բոլոր սաներին, ամենաարդյունավետ կերպով ներառելու, գործընկերների հետ փորձի փոխանակման, համագործակցության և ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվում է մի մոտեցում, որը համեմատաբար նոր է և հայտնի է՝ որպես <<համատեղ ուսուցում>>: Համատեղ ուսուցմանը վերաբերող հետազոտությունները ՆՈՒՀ-ում դեռևս վաղ փուլում են, սակայն ըստ նախնական փորձարկման արդյունքների՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաները համատեղ ուսուցման կիրառման դեպքում առավել ներգրավված են լինում ՆՈՒՀ-ում կազմակերպվող աշխատանքներին, առավել ակտիվ մասնակցություն են ցուցաբերում, քան մեկ դաստիարակի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքում:

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մանկավարժության ամենակարևոր հարցերից է, որով էլ հենց պայմանավորված է մեր կողմից ընտրված հետազոտության թեմայի **ընտրությունն** ու **արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել մանկավարժական աշխատողի համագործակցության ձևերը գործընկերների հետ՝

փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, կարևորելով համատեղ ուսուցման տեսակները:

Նպատակից բխել են հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել հիմնախնդրի շուրջ մասնագիտական գրականության վերլուծություն,

2. Վերլուծել և ներկայացնել համատեղ ուսուցման էությունն ու առանձնահատկությունները՝ որպես համագործակցության տեսակ,

3. Առանձնացնել համատեղ ուսուցման մոդելները,

4. Ներկայացնել համատեղ ուսուցման գործնական ուղղորդումներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- Մասնագիտաական գրականության վերլուծություն,
- Գործնական աշխատանք, այլ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության մեջ ներկայացված համատեղ ուսուցման մոդելներն ու գործնական խորհուրդները կարող են արդյունավետ կերպով կիրառվել ոչ միայն մանկապարտեզներում, այլև ուսումնական և դաստիարակչական գործունեություն իրականացնող ցանկացած կրթական հաստատության մանկավարժական գործընթացում:

Աշատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական մասից, գործնական խորհուրդներից, եզրակացություններից, գրականության ցանկից: Համակարգչային շարվածքով կազմում է 16 էջ:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Համատեղ ուսուցման էությունն ու առանձնահատկությունները

ՆՈՒՀ-ի ուսումնադաստիարակչական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կազմակերպվում են համագործակցային տարաբնույթ աշխատանքներ՝ ժողովներ, վերապատրաստումներ, սեմինար-քննարկումներ, բաց պարապմունքներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ, այլ: Մանկավարժական գործունեության վերոնշյալ տեսակներն ու համագործակցության ձևերն իրականացվում են ոչ միայն տվյալ ՆՈՒՀ-ի մասնագետների, այլև տարբեր կազմակերպությունների /օրինակ ԿԶՆԱԿ հիմնադրամի, ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ների, վերապատրաստող կազմակերպությունների/ կողմից, ովքեր ունեն նպատակ աջակցելու մասնագետներին բարելավելու մասնագիտական որակները և բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը:

Սույն հետազոտական աշխատանքում, փորձ է արվել տեղայնացնել և ներկայացնել համագործակցության մի տեսակ, որը կոչվում է ''Համատեղ ուսուցում'':

Ի՞նչ է համատեղ ուսուցումը: Համատեղ ուսուցումը կարող է կիրառվել կրթական տարբեր միաջավայրերում՝ սկսած ՆՈՒՀ_երից մինչև տարրական և հիմնական դպրոցներ ու համալսարաններ: Համատեղ ուսուցումը մանկավարժների (Friend & Cook, 2010) կամ այլ մասնագետների համագործակությունն է՝ խմբի ներսում տարբեր կրթական կարիքներ ունեցող սաներին ներառելու համար: Ներառական կրթության համատեքստում այն նպաստում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների նկատմամբ սխալների նվազեցմանը և բոլոր սաների ուսուցման բարելավմանը: Միաժամանակ, համատեղ ուսուցման զանազան մեթոդները սաներին ընձեռում են ուսումնառելու տարբեր հնարավորություններ՝ պարապմունքին հաղորդելով բազմազանություն և ստեղծագործականություն: Հանդիսանալով ներառական կրթության արդյունավետ բաղադրիչ, համատեղ ուսուցումը ներառման իրականացման պարտադիր պահանջ չէ: Այն, մյուս ռազմավարությունների հետ միասին, սաներին կրթական

ծառայություններ մատուցելու շատ արդյունավետ և օգտակար ձև է (Friend & Cook, 2004):

Համատեղ ուսուցման նպատակը բոլոր սաների համար ուսումնական ծրագիրը հասանելի դարձնելն է (Friend, Cook, Hurley-Chamberlain & Shamberger, 2010), պարամունքներին և խաղերին բոլորի մասնակցությունը ապահովելը: Համատեղ ուսուցումը նաև աջակցություն է տրամադրում մանկավարժներին (Friend, 2005): Համատեղ աշխատելով՝ երկու մանկավարժներ աշխատում են միևնույն խմբասենյակում կամ խաղասենյակում: Այս մոդելը համատեղում է դաստիարակների՝ ուսումնական ծրագրի ու ծրագրային բաղադրիչի բովանդակության իմացությունը և աջակցության վերաբերյալ հոգեբանական գիտելիքները՝ հիմնված սաների անհատական առանձնահատկությունների վրա: Անհատականացումը, ընձեռելով ուսուցման տարբեր ռազմավարությունների կիրառման հնարավորություն, նպաստում է նաև օժտված սաների ներառմանը: Համատեղ ուսուցումը, ի տարբերություն մեկ դաստիարակի կողմից իրականացվող պարապմունքի, բոլոր սաներին (այդ թվում ԿԶԱՊԿ ունեցող), ընձեռում է ներառվելու և ներգրավվելու առավել լայն հնարավորություններ (Friend & Cook, 2010):

Համատեղ ուսուցման վերջնական նպատակը ուսումնական հաստատություններում բոլոր սաների առավել արդյունավետ ներառումն ու ուսումնաաստիարակչական գործընթացի արդյունքների բարելավումն է: Բացի այդ, միայն դաստիարակի կողմից կազմակերպվող աշխատանների համեմատ, համատեղ ուսուցումը տալիս է ավելի բազմազան և ստեղծագործական ուսոցման և կազմակերպչական մեթոդների կիրառման հնարավորություն, մեծացնում է դաստիարակների և բազմամասնագիտական թիմի կամ աջակցող մասնագետների համարծակցության հաճախականությունը՝ ապահովելով ժամանակը կիսելու, ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու հնարավորություն: Համատեղ ուսուցումը ենթադրում է ոչ միայն պարապմունքի կամ խաղային գործունեության համատեղ անցկացում, այլև պլանավորում (Friend, Cook, Hurley-Chamberlain & Shamberger, 2010) [3]:

Ստորև շարադրված պարբերություններում նկարագրվում են համատեղ ուսուցում իրականացնելու հինգ եղանակները, սակայն նախքան համատեղ

ուսուցման մոդելներին անդրադառնալը, փորձենք ներկայացնել, թե բացի դաստիարակներից և դաստիարակի օգնականներից ովքեր կարող են մասնակցել համատեղ ուսուցմանը, ինչ ռիսկեր կարող է այն պարունակել և որոնք են համատեղ ուսուցման ուժեղ կողմերը:

Համատեղ ուսուցման մի քանի առավելություններ.

1. Այն սաները, ովքեր ունեն ուսումնառության որոշակի դժվարություններ, միաժամանակ չեն ստանում հատուկ մանկավարժի կամ այլ աջակցող մասնագետների ծառայություններ, շահում են դաստիարակ-սան քանակական հարաբերակցության նվազեցումից և համատեղ ուսուցման ժամանակ կիրառվող մեթոդների բազմազանությունից,
2. Երեխաների ակտիվ ներգրավվածությունը պարապմունքին,
3. Երկու և ավելի դասավանդողի համագործակցություն,
4. Սաների բազմազանություն,
5. Պարապմունքի ժամանակահատվածի օպտիմալ օգտագործում,
6. Փորձի փոխանակում,
7. Կապերի հաստատում, անձնային մակարդակում նմանությունների բացահայտում,
8. Ուսուցման, խմբի կառավարման, ուսուցման ոճերի հստակեցում,
9. Ուժեղ և թույլ կողմերի վերհանում, քննարկում:
10. Ուսուցման նպատակի, անհատական ուսուցման և զարգացման պլանի քննարկում, մասնագետների հետ համագործակցում,
11. Գործողությունների պլանավորում, թիմային աշխատանք,
12. Շարունակական աճի գրանցում,
13. Պարապմունքի արդյունավետության բարձրացում:

Ովքե՞ր կարող են լինել համատեղ ուսուցման դերակատարները.

1. Դաստիարակի օգնականը,
2. Հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, լոգոպեդը,
3. Երաժտության դաստիարակը, ֆիզիրահանգիչը, լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցող մասնագետները,
4. Որևէ ծնող կամ սան:

5. Մեթոդիստ, այլ:

Համատեղ ուսուցումն իր մեջ նաև պարունակում է ռիսկեր, որոնք կարող են առաջանալ, ոչ ճիշտ համագործակցության շրջանակի պայմաններում. Դրանցից կարող են լինել՝

- Ուսուցման մեթոդների և ոճերի անհամատեղելիությունը,
- Կոնֆլիկտային փոխհարաբերությունները, երբ մի մասնագետը մյուսին իր առավելություններն ապացուցելու խնդիրն ունի,
- Անհանդուրժողականությունը,
- Ժամանակի ոչ օպտիմալ կառավարումը,
- Իրար օգնելու փոխարեն, խանգարելը, այլ:

1.2 Համատեղ ուսուցման եղանակները կամ մոդելները

Համատեղ ուսուցում կարելի է իրականացնել մի քանի եղանակով: Կարևոր է, որ եղանակն ընտրվի ուսուցանվող նյութի բովանդակության պահանջներին և երեխաների կրթական և զարգացման կարիքներին համապատասխան: Եղանակի ընտրության հարցում կարևոր գործոններ են նաև մանկավարժական կադրերը և ժամանակը: Ստորև ներկայացված հինգ եղանակների հիման վրա դաստիարակները կարող են փորձել նպաստել բոլոր սաների անհատականացված նպատակների և խնդիրների իրագործմանը՝ միաժամանակ բավարարելով խմբի սաների կրթական կարիքներն ու հետաքրքրությունները:

Համատեղ ուսուցումն առավել արդյունավետ կարող է լինել փոքրաքանակ կամ տարատարիք խմբերում:

Աջակցող ուսուցում: Մեկը սովորեցնում է, մյուսը՝ դիտարկում: Այսինքն, մեկ դաստիարակն ուսուցանում, առաջնորդում է ողջ խումբը՝ տալով ընդհանուր ուղղորդումներ, իսկ մյուսը, որպես օգնական, դիտարկում է առանձին սաների վարքը և տարբերակված, առանձին ուղղորդումներով օգնում է նրանց՝ առավելագույնս ներգրավվելու պարապմունքին:

Այս մոդելի դեպքում երկրորդ մասնագետը օգնում է դաստիարակին՝ հասնելու պարապմունքի հիմնական նպատակին, ինչպես նաև օգնում այն սաներին, ովքեր դաստիարակի հրահանգներն ընկալելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն: Համատեղ ուսուցման այս եղանակի առավելությունն այն է, որ երկու մասնագետներն էլ հնարավորություն են ունենում ինչ-որ ժամանակ դիտարկելու ողջ խումբը և առանձին սաների: Հիմնական դաստիարակը պլանավորում է պարապմունքը, ուստի որոշ ժամանակ հատկացնում է նախնական պլանավորմանը:

Առավել պատկերավոր տես նկար 1:

Նկար 1

Աջակցող ուսուցում



Զուգահեռ ուսուցում: Խմբում ընթանում է զուգահեռ ուսուցում երկու խմբերով: Խմբերի բաժանման սկզբունքը, որպես կանոն, կախված է լինում սաների գիտելիքների և կարողությունների մակարդակից կամ սովորելու ոճերի ընդհանրություններից:

Յուրաքանչյուր մասնագետ յուրաքանչյուր խմբի հետ աշխատում է իր ուղղորդումներով, սակայն պարապմունքի նպատակը երկու խմբերում նույնն է: Սա առավել քիչ օգտագործվող մոդելներից է:

Այս մոտեցման դեպքում մասնագետները համատեղ պլանավորում են ուսուցումը: Խումբը բաժանվում է երկու խմբի, ամեն դաստիարակ կամ մասնագետ աշխատում է մի խմբի հետ: Այս մոտեցումը նվազեցնում է սան-դաստիարակ թվային հարաբերակցությունը և ամենից արդյունավետ է նախագծային աշխատանքների ժամանակ, երբ սաներն առավել աջակցության կարիք ունեն: Օրինակ՝ սաների մի խմբում կարելի է ընդգրկել այլ, իսկ մյուս խմբում՝ այլ հետաքրքրություններ և նախասիրություններ ունեցող սաներին՝ այդպիսով ապահովելով խմբերում

բազմազանության առկայությունը և կրթական կարիքների և հետաքրքրությունների զանազանումը: Տես նկար 2.

Նկար 2

Զուգահեռ ուսուցում



Ուսուցում կայաններում կամ ուսուցման կենտրոնների տեղափոխման մոդել. Կայանը ձևավորում են դաստիարակները կամ խմբի սաները խմբասենյակի որևէ հատվածում՝ սաների հետ աշխատելու համար: Ստեղծվում են տարբեր կայաններ: Սաները տեղափոխվում են մի կայանից մյուսը: Ամեն կայանում աշխատում է մեկ մասնագետ: Մի կայանում կարող է կազմակերպվել հեքիաթի ընթերցանություն, մյուսում՝ կերպարվեստային գործունեություն, սակայն բոլորը կապված են միևնույն թեմայի հետ: Կայաններով աշխատանքը կարելի է կազմակերպել ցանկացած ծրագրային բաղադրիչից: Կայաններում հանձնարարվում են պարապմունքի ընդհանուր խնդիրներին առնչվող տարբեր առաջադրանքներ: Դաստիարակներն ու օգնականները միմյանց միջև կիսում են կայանները: Տես նկար 3:

Նկար 3.

Կենտրոնների տեղափոխման մոդել կամ ուսուցում կենտրոններով



Այլընտրանքային ուսուցում. Այս ռազմավարությունը հնարավորություն է տալիս դասավանդելու փոքր խմբերի: Երբ ընդհանուր խմբի կամ մեծ խմբի համար այս կամ այն հմտությունը առանձնացված ձևավորելու անհրաժեշտություն չկա, որոշ սաներից կազմվում է յուրահատուկ, փոքր խումբ: Այլընտրանքային ուսուցումը ներառական միջավայրում ընձեռում է խորացված ուսուցում իրականացնելու հնարավորություն: Այն թույլ է տալիս, որ խմբի բոլոր սաները նյութի որոշակի մասը ստանան փոքր խմբերով աշխատելիս: Այս մոտեցման առնչությամբ մի մտավախություն կա. հաճախ այն կիրառվում է միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների հետ: Արդյունքում, նրանք մշտապես առանձնացվում, մեկուսացվում են մեծ խմբից՝ ֆիզիկապես գտնվելով միևնույն խմբասենյակում, մինչդեռ այս մոդելը կարելի է կիրառել օժտվածություն ունեցող երեխաների հետ աշխատանքում կամ տարատարիք կամ բազմալեզու խմբում: Տես նկար 4

Նկար 4

Այլընտրանքային ուսուցում

• **Թիմային ուսուցում**. Թիմային ուսուցման ժամանակ երկու մասնագետները միաժամանակ սովորեցնում են միևնույն բանը, ուստի վերջին հաշվով համաուսուցում են մեկ խմբի: Ուսուցումն ավելի շատ նմանվում է զրույցի: Որոշ հետազոտողներ այս եղանակը համարում են ամենաբարդը, բայց նաև՝ ամենից գոհացնողը: Մեկը սովորեցնում է, մյուսն՝ օժանդակում: Այսինքն, այս մոդելում մասնագետները ուսուցում են միասին՝ միևնույն նպատակով և ուղղորդումներով՝ պարապմունքի ողջ ընթացքում իրար փոխլրացնելով: Այս մոդելի դեպքում հաճախ այնպես է ստացվում, որ դաստիարակներից մեկը առավելապես առաջնորդում է պարապմունքի

բովանդակային մասը, իսկ մյուս մասնագետը՝ հրահանգների, գործնական առաջադրանքների ուղղորդումների մասը: Տես նկար 5:

Նկար 5

Թիմային ուսուցում



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Համագործակցային մոտեցումներից որևէ մեկի կիրառումից առաջ կարևոր է որոշել, թե որն է ամենաօգտակարը՝ հաշվի առնելով ՆՈՒՀ-ի մանկավարժական ռեսուրսը, սաների առանձնահատկությունները և ուսուցանվող նյութի բովանդակությունն ու ծավալը [1]:

- Կարևոր է, որ թիմերը քննարկեն պարապմունքի բովանդակությունը և որոշեն ամենից հարմար մոտեցումը՝ ելնելով սաների անհատական և տարիքային առանձնահատկություններից, հետաքրքրություններից, նախասիրություններից, այլ: Օրինակ, երբ խմբում կա այնպիսի սան, ով դժվարանում է աշխատանքի մի ձևից անցում կատարել մյուսին, պետք չէ ընտրել մոտեցում, որը պարապմունքի ընթացքում շատ կտրուկ փոփոխություններ է պահանջում:
- Կարևոր է հաշվի առնել նաև համագործակցող մասնագետների առանձնահատկությունները և կարիքները: Եթե համատեղ դասավանդողների ոճերը տարբեր են՝ լավագույն ձևը կլինի ընտրել մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս աշխատելու իրարից անկախ: Եթե մասնագետները հեշտ են աշխատում միասին լավագույն տարբերակը կլինի միասին դասավանդելը:
- Ուսումնական ծրագիր, ներառյալ բովանդակություն և ուսուցման ռազմավարություններ: Կարևոր է հաշվի առնել նյութի բովանդակությունը և թե որն է ուսուցման ամենահարմար ռազմավարությունը: Խիստ կանոնակարգված, ուսուցման և հստակ քայլերի կատարում պահանջող բովանդակության դեպքում կարող է պահանջվել մի մոտեցում, իսկ գաղափարների ազատ, չկանոնակարգված քննարկման դեպքում՝ բոլորովին այլ:
- Գործնական նկատառումներ. Եթե խմբում սաների թիվը շատ մեծ է, կարող եք ընտրել մի մոտեցում, որի արդյունավետությունը կախված չէ սաների միջև տարածության պահպանումից:
- Մանկավարժական աշխատողների մասնագիտական պատրաստվածությունն ու պատրաստակամությունը: Համատեղ ուսուցում սկսելուց առաջ կարևոր է հասկանալ նաև, թե որքանով են մասնագետները պատրաստ գործընթացը սկսելուն:

Որոշ ՆՈՒՀ-երում կարող են մանկավարժական աշխատողները կարող են հեշտորեն ընդունել համատեղ ուսուցման գաղափարը, մյուսները կարող են դիմադրել:

Այժմ անդրադարձ կատարենք մեր կողմից իրականացված համատեղ ուսուցման փորձին, որն իրականացվել է Երևանի Հ. 6 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի միջին խմբում:

Այն իրականացվել է հետևյալ քայլաշարով:

1. Դաստիարակի հետ համատեղ քննարկել ենք, թե ինչպես ենք բաշխելու մեր անելիքները պարապմունքի ընթացքում, քննարկել ենք մեր տեսակետներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները: Օրինակ՝ աղմկոտ միջավայրը մեկի կողմից կարող է ընկալվել որպես արդյունավետության ու սաների զբաղվածության նշան, մյուսի կողմից աշխատելու համար անբարենպաստ միջավայր:

2Քննարկել ենք տվյալ խմբի սաների առանձնահատկությունները և համաձայնության ենք եկել անհրաժեշտ պայմանների ապահովման շուրջ:

3. Որոշել ենք համատեղ ուսուցման առաջին օրվանից ներկայանալ սաներին որպես հավասար լիազորություն ունեցող գործընկերներ:

4. Խորհրդակցել ենք առօրյա հարցերի շուրջ: Օրինակ՝ որոնք են մեր ակնկալիքները առօրյա գործողություններից, և ե՞րբ ենք իրականացնելու համատեղ ուսուցման որոշ հարցերի արագ քննարկումը:

5. Քննարկել ենք, թե ինչպես ենք կիսելու ուսուցումն ու մեր պարտականությունները:

6. Խոսել ենք այն հնարավոր առավելությունների և թերությունների մասին, որոնք յուրաքանչյուր մասնագետ կարող է ունենալ համատեղ ուսուցման ընթացքում:

7. Իրականացրել ենք համատեղ պլանավորում, պարապմունքի համար անհրաժեշտ դիդակտիկ նյութի պատրաստում և ընրություն, խմբասենյակի նախապատրաստում և, այնուհետև, պարապմունքի վարում:

8. Իրականացրել ենք հանդիպման տեսանկարահանում, որն այնուհետև դիտել և վերլուծել ենք, իրականացնելով վերլուծական անդրադարձ՝ շտնկելու առկա բացթողումները և բարելավելու հետագա աշխատանքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության շուրջ կատարած մասնագիտական գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն տվեցին հանգելու հետևյալ եզրակացություններին.

- Համատեղ ուսուցումը համեմատաբար նոր մոտեցում է, որը բխում է բոլոր սաներին պարապմունքին ներգրավվելու պահանջից և բոլորի կարիքները հաշվառելուց,
- Այն հանդիսանում է արդյունավետ փորձի փոխանցման և արդյունավետ վերլուծական անդրադարձ կատարելու միջոց:
- Որպես համագործակցության տեսակ, կարելի է փորձարկել և ընտրել առավել արդյունավետ մոտեցումը՝ ելնելով մանկավարժական աշխատողների և խմբերի առանձնահատկություններիվ:

Ուստի, կարելի է փաստել, որ համատեղ ուսուցումն դաստիարակներին տալիս է անհրաժեշտ աջակցություն ունենալու հնարավորություն, միաժամանակ սաների համար ապահովելով ներգրավվածություն մանկավարժական գործունեության բոլոր ձևերին: Համատեղ ուսուցումը, ինչ-որ տեղ, նաև մարտահրավերներ է մանկավարժական աշխատողների համար, քանի որ վերջիններս պետք է վերանայեն իրենց աշխատանքի ոճն ու միմյանց փոխլրացնեն իրենց ուժեղ կողմերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան Ուսուցման ժամանակակից մոտեցումներ, Ձեռնարկ ուսուցչների, ուսուցչի օգնականների եւ մանկավարժահոգեբանական աջակցման ծառայություններ մատուցող մասնագետների համար,Երեւան, 2019թ

2. Ներառող դասավանդում: Մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Ա. Հ. Սվաջյան և ուրիշ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, - Եր.: Էդիթ Պրինտ, 2023 - 240 էջ

2. General and special education students' perceptions of co-teaching: Implications for secondary-level literacy instruction. Reading and Writing Quarterly, 22, 205-225.

3. https://lalamanoukyan.wordpress.com/2014/06/05/cooperative-teaching/